

ՀՀ ՊԱՍ ԶՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆԻ ՀԱՍԼԵՏԻ

**ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ «ՊԱՏՍՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՆԳԻՆ
ՍԻՍԱԿԱՆ» ԵՐԿԻ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՈՃԸ**

**Ժ. 02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանակավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Լ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գ.Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ն.Բ.ՊՈՂՈՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական
մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. դեկտեմբերի 9-ին՝ ժամը 15-ին, ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՂ-ի Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. նոյեմբերի 7-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտքարտուղար՝

բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ Ն.Մ.Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: XIII դարի հայ պատմագրության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում նշանավոր պատմիչ, Սյունիքի հոգևոր առաջնորդ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկը: Այս աշխատությունը հայագիտության մեջ քննել են պատմագիտական և գրականագիտական առումներով¹: Երկի աշխարհաբար թարգմանությունը կատարել է Ա.Ա.Աբրահամյանը: Նա թարգմանության ներածության մեջ ընդգծում է, որ այն խիստ արժեքավոր է լեզվական տեսակետից և ունի առանձին հետազոտության կարիք²: Սակայն մինչ օրս չի իրականացվել Ստ. Օրբելյանի երկի լեզվի համակողմանի և ամբողջական քննություն, որով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ստ. Օրբելյանի երկի լեզվի ուսումնասիրության միջոցով փորձ է արվել բացահայտելու XIII դարի պատմագրության լեզուն և ոճը, վերհանելու և ընդգծելու այն առանձնահատկություններն ու փոփոխությունները, որոնք նոր լեզվամտածողության հետևանք են:

Հետազոտության խնդիրներն ու նպատակները: Ատենախոսության հիմնական նպատակն է բնութագրել Ստ. Օրբելյանի երկի լեզուն և ոճը, ցույց տալ, թե որքանով է հետդասական հայերենը գործառվել հեղինակի երկում, ինչպես նաև պարզել, թե որքանով է Ստ. Օրբելյանի երկն արտացոլում XIII դ. հայերենի լեզվական օրինաչափություններն ու յուրահատկությունները:

Նշված նպատակների իրագործման համար խնդիր է դրվել.

1. ուսումնասիրել և վեր հանել հնչյունական համակարգում տեղի ունեցած այն փոփոխությունները և շեղումները, որոնք ի հայտ են եկել XIII դարում,

2. առանձնացնել հեղինակային նորակազմությունները և բառերի առաջին վկայությունները, մակաբերել նոր բառերի բառակազմական կաղապարները, ինչպես նաև բացահայտել երկում առաջին անգամ հանդիպող փոխառությունները, առանձնացնել այն բառերը, որոնք այս շրջանում գործածվում են նոր իմաստներով,

3. քննել ամուսն խոսքի մասերի՝ հոլովման և խոնարհման համակարգերի դրսևորած յուրահատկությունները և ցույց տալ այն տարբերությունները, որոնք արժևորվում են հին շրջանի համեմատությամբ,

4. ցույց տալ շարահյուսական մակարդակում կատարված (շարադասական) փոփոխությունները, միջինհայերենյան և աշխարհաբարյան շարահյուսական սաղմնային տարրերը և դրանց զուգորդումները գրաբարյան ձևերի հետ,

5. քննել երկի լեզուն և պարզել, թե լեզվի ոճավորման ինչ եղանակներ և միջոցներ է կիրառել հեղինակը՝ խոսքն ավելի պատկերավոր և արտահայտիչ դարձնելու նպատակով, ինչպես նաև ցույց տալ, թե գրաբարում տարածված

¹Թ.Հակոբյան, Ստ.Սելիք-Բախշյան, Ստեփանոս Օրբելյան, Ե., 1960: 9.Գրիգորյան, Ստեփանոս Օրբելյան, Պատմա-բանասիրական հանդես, № 4, 1976, 155-164 էջեր: Ածաթնալի Բ., Բեզի ս, ääyö äëüí í ñò ü è í àò-í í -èñò í ðe-áñèí à í àñèäàèä Ñò àí àí í ñà í ðàäëyí à (Aào í ðáo àðáo èaí à. àèñ.), Aðááai, 1975: Ն.Թամանյան, Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական» երկը որպես գեղարվեստական ակնարկ (թեմ. և ատենախոսության սեղանագիր), Ե., 2010:

²Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ներածություն (աշխարհաբար թարգմ., ծանոթ. և առաջ. Ա.Ա.Աբրահամյանի), Ե., 1986, 3-64 էջեր:

ոճավորման միջոցները (ավելադրություն, պեսպիսություն, վերացականը թանձրացականի փոխարեն) որքանով են պահպանվել հեղինակի երկում:

Յետազոտության գիտական նորույթը: Ստ. Օրբեյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի լեզուն առաջին անգամ համակողմանի և հիմնավոր քննության է ենթարկվում՝ ընդգրկելով լեզվական բոլոր մակարդակները (հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն, ոճաբանություն):

Յնչյունական համակարգի ուսումնասիրության ժամանակ նկատված որոշ լեզվական իրողություններ վկայում են, որ Ստ. Օրբեյանի երկը առաջիններից է, որ արձագանքել են XIII դարում հնչյունական համակարգում տեղի ունեցած փոփոխություններին:

Յանգամանալի քննության են ենթարկվել նորակազմ բառերի բառաբարդման և ածանցման կաղապարները: Երկի հետազոտության ժամանակ առանձնացվել է 172 նորակազմ բառ:

Ճշգրտվել է մի շարք փոխառությունների գործածության ժամանակը:

Ձևաբանական և շարահյուսական մակարդակներում ի հայտ եկած որոշ լեզվական իրողություններ (օրինակ՝ հարակատար դերբայի գործածությունը, հատկացուցչի և որոշչի շարահատությունը և այլն) վկայությունն են այն երևույթի, որ երկում տեղ են գտել լեզվի պատմական զարգացման ընթացքում կայունացած որոշ իրողություններ:

Յետազոտության մեթոդաբանական հիմքերը: Ուսումնասիրության համար մեթոդաբանական հիմք են գիտական ուսումնասիրության ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնավոր մեթոդները: Դրանցից կարևորվել են լեզվատրամաբանական, ինդուկցիայի, պատմահամեմատական (տարժամանակյա), նկարագրական (համաժամանակյա), համակարգային-կառուցվածքային մեթոդները, ինչպես նաև վերլուծական եղանակը. վերջինս ընդգրկում է կառուցվածքային լեզվաբանության մեջ ընդունված բառակազմական սկզբունքները, որոնք լեզվական կառույցները քննում են ըստ հիմնականադարձերի և դրանց համապատասխան մասնակաղապարների:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Յետազոտության տեսական արժեքը լեզվի պատմության, մասնավորապես XIII դարի հայ պատմագրության լեզվի հնչյունական, բառագիտական, ինչպես նաև քերականական և ոճաբանական համակարգերի համալիր ուսումնասիրությանը և ամբողջականացմանը նպաստելն է՝ ելնելով Ստ. Օրբեյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի տվյալներից:

Յետազոտության արդյունքները կարելի է կիրառել բարձրագույն ուսումնական հաստատություններում «Պատմական քերականություն», «Յայոց լեզվի պատմություն», «Պատմական ոճագիտություն» դասընթացների ուսումնասիրության ժամանակ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և կազմում է համակարգչային 150 էջ:

Ատենախոսությունը քննարկվել է Խ.Աբովյանի անվան ՅՊՄՅ ակադ. Ա.Ղարիբյանի անվ. հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում և երաշխավորվել պաշտպանության:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՄԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության *ներածությամբ* մեջ անդրադարձ է կատարվում Ստ. Օրբելյանի կյանքի ու բազմաշերտ գործունեության որոշ դրվագների, տրվում է նրա «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության ընդհանուր բնութագիրը, ներկայացվում են հայագիտության մեջ այս աշխատության վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները (պատմագիտական, գրականագիտական, լեզվագիտական):

ՊԼՈՒԽ Ի. ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱԳՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

XIII դարում հայոց լեզվի հնչյունական համակարգը կրել է զգալի փոփոխություններ, որոնք լեզվական համակարգի աստիճանական զարգացման և փոփոխության արդյունք էին: Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի հնչյունական մակարդակում տեղի ունեցած փոփոխությունները տարաբնույթ են. հանդիպում են ինչպես գրաբարի հնչյունական համակարգին հատուկ հնչյունափոխական երևույթներ, այնպես էլ լեզվի զարգացման ընթացքում կատարված փոփոխություններ, որոնք նոր երևույթ էին XIII դարի համար և կայունացել են հնչյունական համակարգում:

Ա. Ձայնավորների հնչյունափոխություն: Ձայնավոր հնչյունների փոփոխությունները պատմականորեն տեղի են ունենում տարբեր պատճառներով և պայմանավորված են տարբեր գործոններով: Հայերենում ձայնավորների, ինչպես նաև երկբարբառների և եռբարբառների պատմական փոփոխությունները հիմնականում պայմանավորված են նրանց դիրքով և բառական շեշտով:

Ու>վ՝ քննվող երկուսն հանդիպում են բառեր՝ արդեն ու-ի փոխարեն *վ* գրությամբ, ընդ որում՝ զգալի տոկոս են կազմում *վ*-ով տարբերակները, ինչպես՝ *Որդուատ* (1, 121)³ // *Որդվատ* (1, 61), *տվի* (2, 163): *Ու>վ* պատմական հնչյունափոխության առաջին վկայությունը վերաբերում է IX դարին. այն հանդիպում է Սևանի ՅԻԳթ. (874թ.) մի արձանագրության մեջ, որը մեջբերել է Ստ. Օրբելյանը իր երկում⁴:

Հանդիպում է *ե(ե)>ա* հնչյունական անցում՝ *Վարդեվառ* (2, 13) // *Վարդավառ* (2, 13), *Օձնեցի* (1, 161) // *Օձնացի* (2, 202): Նման հնչյունափոխական իրողություն հայերենում առաջին անգամ նկատվում է X դարում, որ կայունանում է ավելի ուշ՝ XV դարից հետո⁵: Երկուսն հաճախակի հանդիպող այս երևույթը վկայում է, որ նման ձևերը տարածվել են ավելի վաղ շրջանից՝ XIII դարից:

Երկուսն հաճախ են հանդիպում ձայնավորների դիքային հնչյունափոխության դրսևորումներ. առավելապես հանդիպում է միջին հայերենում տարածված *օ>ու* հնչյունափոխության դրսևորում⁶. *տօմար* //

³Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, հ.հ. Ա, Բ, Փարիզ, 1859 (այսուհետ փակագծերում կնշվեն աշխատության այս հրատարակության էջերը):

⁴Փաստն արձանագրում է Ա. Աբրահամյանը (տես Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ, Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, № 4, Ե., 1957, էջ 83):

⁵Ալեքարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972, էջ 83:

⁶Նույն տեղում, էջ 85:

դ) խուլ բաղաձայնների վերածուկը (տեղաշարժը) շնչել խուլերի.

Պ>փ՝ պայքար>փայքար (1, 224), ապշել>ափշել (1, 101):

Կ>ք՝ Սեդրակ>Սեդրաք (2, 110):

Տ>թ՝ դատափետ>դատափեթ (2, 184):

ե) Շնչել խուլերի վերածուկը (տեղաշարժը) խուլ բաղաձայնների.

Թ>տ՝ սուլթան>սուլտան (1, 213):

Որոշ օրինակներում շնչել խուլերը խլանում են փոխազդեցական հնչյունափոխության հետևանքով.

Չ>ժ՝ ճիչ>ճիժ (1, 233):

Այս շրջանում նորություն էր **Ֆ** հնչյունի առաջին գրավոր վկայությունը:

Բնագրում թեև սակավ, բայց հանդիպում են բառեր, որոնցում փ-ի փոխարեն երբեմն գրված է **Ֆ**. փ>**Ֆ**՝ փախրըլմսեհ // **Ֆ**ախրելմսեհ (2, 87), Փռանգ // **Ֆ**ռանգ (1, 302):

Որոշ բառեր բնագրում հանդիպում են առանց *փ* հնչյունով տարբերակի՝ Ջաֆար (1, 213), Անուաֆոե (2, 98), պոսոֆրոնտես (1, 97): Վիճական արձանագրություններում **Ֆ** տառն առաջին անգամ հանդիպում է Տաթևի սուրբ Գր. Լուսավորիչ վանքի մի արձանագրության մեջ՝ կատարված 1295թ.¹¹: Նրա անվան առնչվող այս արձանագրությունը ևս վկայում է, որ **Ֆ** գրի առաջին կիրառողներից մեկը Ստ. Օրբելյանն է եղել:

XIII դ. լեզվի հնչյունական համակարգում բաղաձայնների փոփոխությունները կրում են տեղաշարժերի բնույթ, այսինքն՝ հնչյունափոխությունն ընդգրկել է բաղաձայնական շարքեր՝ առաջացնելով տեղաշարժ-տեղափոխություն բաղաձայնների եռաշարք համակարգում: Դրանով հանդերձ, այդ տեղաշարժերը թեև ունեցել են գրային արտահայտություն, այնուամենայնիվ դրանք մնացել են հնչյունախոսության մակարդակում և հետագայում չեն արձանագրվել իբրև հնչյունափոխության արդյունք կամ հետևանք:

Գ. Երկբարբառների և եռբարբառների փոփոխությունները:

Հայերենի հնչյունական համակարգում փոփոխություններ են տեղի ունեցել մեկ երկբարբառների և եռբարբառների գրության և արտասանության մեջ: *Ա* երկբարբառ հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում փոխվել է *օ* պարզ ձայնավորի:

Քննվող երկու կան բազմաթիվ օրինակներ, որոնցում երկու տարբերակները՝ *ա* և *օ*, կիրառվում են հավասարապես, և դժվար է առանձնացնել, թե որի կիրառությունն է գերակշռում¹²:

Սա համընդհանուր իրողություն էր հայ պատմագրության մեջ. *Լաւոտ* (2, 124), *Լոտ* (2, 134), ընդ որում՝ *ա* երկբարբառը փոխարինվում է ինչպես *օ*-ով, այնպես էլ *ո*-ով¹³, ինչպես՝ *պրաստաֆրանդես* (2, 228), *պրտոֆրանտես* (1, 66), *պոսոֆրոնտես* (1, 97):

¹¹Դիվան հայ վիճագրության, պրակ II (կազմ.՝ Ս. Բարխուդարյան), Ե., 1960, էջ 25: Նաև՝ Ս. Գյուլբուդաղյան, Հայերենի ուղղագրության պատմություն, Ե., 1973, էջ 84:

¹²Պետք է նկատի ունենալ, սակայն, որ բնագրի փարիզյան հրատարակության մեջ շատ դեպքերում *օ*-ով գրությունը ձեռագրում հնագույն *ա* ձևով է հանդիպում (տես Ա.Ա.Աբրահամյան, Բնագրագիտական դիտարկումներ Ստեփանոս Օրբելյանի պատմական երկում, Պատմա-բանասիրական համալսում, 1985, № 3, էջ 56):

¹³Ա.Աբրահամյանը *ա*//*ո* անցման ամենաին վկայությունը բերում է 10-րդ դարից (տես Ա.Աբրահամյան, Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի

Դասական գրաբարում շեշտը կորցնելիս *եա* երկբարբառը վերածվում էր *ե* պարզ ձայնավորի, ինչպես՝ մատեան // մատենի (1, 174): Հետագայում *եա* > *ե* փոփոխությունն նկատելի է նաև բառի ուղիղ ձևերում (անկախ շեշտից), ինչպես՝ *բղեաշխ* (1, 101) և *բղեշխ* (1, 220):

Այլ երկբարբառը կրել է *ալ* > *ա* փոփոխությունը՝ վերածվելով պարզ ձայնավորի, ինչպես՝ Այրարատ (2, 44) // Արարատ (1, 101):

Անգառագեղ բառի միայն հնչյունափոխված տարբերակն է հանդիպում՝ անգառագեղ՝ (1, 108):

իւ և *եւ* երկբարբառները գործառական տարբերակում չունեին, ուստի հին հայերենում կարող էին փոխարինել միմյանց: Սակայն փակ վանկում *եւ* > *իւ* երկբարբառների փոխարինման օրինակ այս երկում չի հանդիպում. փակ վանկում բացառապես գործածվում է *իւ* երկբարբառը:

Հին հայերենում *իւ* > *ի* հնչյունափոխությունը հիմնականում արձանագրվում էր դերանվանական ձևերում, թեև այս օրինաչափությանը հարում են նաև հատուկեմտ բառեր¹⁴. Ստ. Օրբելյանի երկում հնչյունափոխվում են նաև գոյականներ՝ կիրակէ (2, 107) // կիրակէ (2, 194):

Գրաբարի *եաւ* եռաբարբառը հնչյունափոխվում է՝ վերածվելով երկհնչյունի՝ *եօ*՝ արդեաւ > արդեօք (1, 108): Իսկ *իայ* եռաբարբառը գրաբարում բառակազմության ժամանակ հնչյունափոխվում էր *է(ե)* պարզ ձայնավորի: Այսպիսի հնչյունափոխությունը Վ. Առաքելյանը համարում է հին հնչյունափոխություն, որը կանգ էր առել արդեն գրաբարում¹⁵: Բնագրում հանդիպող բառերում *իայ* եռաբարբառը մեծ մասամբ չի հնչյունափոխվում. *միայնարան* (2, 14), *միայնակեաց* (2, 235) և այլն:

ԳԼՈՒԽ II. ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստ. Օրբելյանի երկի բառապաշարը քննվել է իմաստաբանության և բառակազմության առումներով: Իմաստաբանության բաժինը ներառում է բառերի իմաստային նոր կիրառությունները և փոխառությունները, իսկ բառակազմական քննության ենթարկվել են Ստ. Օրբելյանի երկի հեղինակային նորակազմությունները:

Ա) ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Բառերի իմաստային նոր կիրառություններ*: Ատենախոսության այս բաժնում քննվել են այն բառերը, որոնք հայոց լեզվի զարգացման այս փուլում (XIII դար) իմաստային նոր փոփոխություններ են կրել: Բառերի իմաստային փոփոխությունները և նոր իմաստների ի հայտ գալը հիմնականում տեղի են ունենում բառագործածության ընթացքում: Ստ. Օրբելյանի երկում բառերի նոր նշանակություններն առանձնացնելիս նկատի է առնվել այն, որ կան բառեր, որոնք կիրառված են ինչպես իրենց նախկին, այնպես էլ նոր նշանակություններով: Ըստ վերը նշված հատկանիշների՝ առանձնացվել են՝

ա) Գրաբարյան իմաստներին զուգահեռ նոր իմաստներով կիրառված բառեր (որոշեմ - «սահմանել, զանազանել, բաժանել, վճռել», նոր իմաստ՝ «**բնորոշել**» (1, 137), *վճարեմ* - «ավարտել, մահանալ», նոր իմաստ՝

երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ, ՀՍՄՀ ԳԱ Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, № 4, 1957, էջ 75):

¹⁴Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, էջ 106:

¹⁵Վ.Առաքելյան, Գրաբարի քերականութիւն, Ե., 2010, էջ 16:

«անցկացնել» (1, 122), *ներկեմ* - «ներկել», նոր իմաստ՝ «վարակվել» (1, 146), *բաժակ* - «զավաթ», նոր իմաստ՝ «բաժակաճառ» (1, 69) և այլն:

բ)Նոր իմաստներ, որոնք արձանագրված չեն գրաբարյան բառարաններում. *ընդոստնիմ* - «զգաստացնել» (1, 140), «*ընդդիմանալ*» (2, 184), *մալ* - «անասնատուրք» (2, 241), *նպերտ* - «հնազանդ» (1, 246), *կատապան* - «այգեպան» (1, 128), *տրապեզ* - «սեղանատուն» (1, 270):

2. Փոխառություններ: Ստ. Օրբելյանի երկի բառային կազմում որոշակի տոկոս են կազմում փոխառությունները: Հեղինակի ապրած ժամանակաշրջանում (XIII դար) օտար լեզուների ազդեցությունը զգալի էր. նա ևս երկը գրելիս չի խուսափել փոխառյալ բառերի գործածությունից: Դրանք փոխառություններ են *պարսկերենից* (աթաշփարիստ (2, 233), փարման (2, 96), փեղամբար (2, 36)), *պահլավերենից* (խոստակղար (1, 251), անխուլեշքար (1, 251)), *վրացերենից* (դեդեպուլ, դպել, ժինամ ծղար, ճղանդիտել, մամթավար (2, 100)), *հունարենից* (պռոտոֆրոնտես (1, 97), զաւռախ (1, 302), տրապեզ (1, 270)), *արաբերենից* (թաբուտ (2, 167), մանշուր (2, 87), նալաթ (2, 36), նալաթնամայ (1, 279)), *քաղարերենից* (պասխազ (2, 159), մանդլայ (2, 219)), *ասորերենից* (պարութայ (1, 49), զուրկ (1, 56)), *լատիներենից* (սիզել (2, 96), կենառ (1, 178)), *բուրբերենից* (պայռի (1, 86), բալիշ (2, 170)), *հին ֆրանսերենից* (զոնթ (2, 188)):

Երկում հանդիպող փոխառությունների ցանկում մեծ թիվ են կազմում *պարսկերեն, վրացերեն և արաբերեն* փոխառությունները: Ըստ իմաստային - թեմատիկ բաժանման՝ երկում հանդիպող փոխառությունները բազմազան են՝ օրենք, իշխանություն, կրոն և հավատալիք, ծիսակարգ, հասարակական և քաղաքական բաժանումներ, հասարակական հարաբերություններ, ռազմական գործ, զգացմունք, խառնվածքային, բարոյական և զեղագիտական ըմբռնումներ, սեփականություն և առևտուր, շարժում նշանակող բառեր:

Բ) ԲԱՌԱՎԱԶՍՈՒԹՅՈՒՆ

1. Հեղինակային նորակազմություններ և նորահայտ բառեր: Ստ. Օրբելյանի երկի հեղինակային նորակազմությունները (բաղադրությունները) ներկայացվել են բառակազմական կաղապարների միջոցով:

Ա. Բառաբարդման կաղապարներ: «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի նորակազմ բառերը ստեղծված են գրաբարի բառակազմության օրենքներով՝ բառաբարդմամբ և ածանցմամբ. դրանք բաղադրություններ են, որոնցում մեծ թիվ են կազմում բարդությունները:

Բարդությունները հիմնականում կազմվում են հոդակապի միջոցով: Հոդակապով երկհիմք բարդություններ կազմվում են միայն նյութական իմաստ ունեցող խոսքի մասերով՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ: Բարդության կաղապարը ստանալու համար նրա բաղադրիչները՝ սերող և բաղադրող հիմքերը, հիմնային ածանցները, հոդակապը ընդունված է նշանակել լատիներեն այբուբենի տառանշաններով: Այսպես, հիմնային բաղադրիչ – S, հնչյունափոխված հիմք – S, ածանց – a, քերականական մասնիկ – f, հոդակապ – j, նախդիր – p¹⁶:

Բարդությունը կազմվում է սերող և բաղադրող հիմքերից, որոնցից առաջին հիմքը սովորաբար սերող հիմքն է, երկրորդը՝ բաղադրողը¹⁷:

¹⁶Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987, էջ 56:

¹⁷Լ. Մ. Խաչատրյան, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011, էջ 15:

SjS - հիմնակաղապարի բաղադրող հիմքը սերող հիմքին միացել է հողակապով: **SjS** հիմնակաղապարը, ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության, ունի հետևյալ մասնակաղապարները.

NjN (զոյ.+հոդ.+զոյ.) - *եկեղեցաբլուր¹⁸ (1, 75), *առիւծազլուխ (2, 124), *վիշապազոր (1, 79), *վարազագիր (1, 54):

AjN (ած.+հոդ.+զոյ.) - *լայնածիր (1, 311), *հեշտավայր¹⁹ (1, 209), *մեծավիճակ (2, 109), *հրաշալուր (1, 174), *հրաշքարտար^{**} (1, 82):

SjS - ենթակաղապարի մասնակաղապարներն են.

NjN (զոյ.+ հոդ.+ զոյ.) - *տիրապատուէր (1, 50), *տիրասուն – (1, 90), *լուսատարր (1, 207):

AjN (ած.+ հոդ.+ զոյ.) - *ուղղակշիռ (1, 215), *հարստայոյս (1, 223), *սրբաքար – (2, 58)²⁰:

SjS –բաղադրող հիմքը սերող հիմքին միացել է հնչյունափոխված հողակապով: Մասնակաղապարն է՝

AjN (ած.+ հոդ.+ զոյ.) - *բարեպատճառ* (1, 258):

SjS' – քերականական ձևավորում ունեցող սերող հիմքին բաղադրող հիմքը միացել է հողակապով.

NjV' (զոյ.+ հոդ.+ բայահիմք) - *ծովամատոյց²¹ (1, 271), *քարագնաց (1, 236):

SS – հիմնակաղապար. բաղադրող հիմքը միացել է սերող հիմքին առանց հողակապի. մասնակաղապարն է՝ **AN (ած.+զոյ.)** - սեւերես* (1, 263):

SS - ենթակաղապարի մասնակաղապարն է՝ **AN (ած.+զոյ.)** - *ահագներանդ (2, 119):

SS' - քերականական ձևավորում ունեցող սերող հիմքին բաղադրող հիմքը միացել է առանց հողակապի՝ **NV' (զոյ.+ բայ)** - *ծայրնկէց (1, 86):

(SjS)jS - սերող պարզ հիմքին բաղադրող բարդ հիմքը միանում է հողակապով, որի մասնակաղապարն է՝ (NjN)jN -*հայրապետախումբ:

Որպես բարդության սերող հիմք առավել զործուն է գոյականը (N):

Բ. Ածանցման կաղապարներ: Ածանցման հիմնակաղապարն է մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևույթի (ածանց) բաղադրությունը, այսինքն՝ ածանցման հիմնակաղապարը ենթադրում է նվազագույնը մեկ միջուկային և մեկ առմիջուկային անդամ²²:

¹⁸Ստ. Օրբելյանի երկի բնագրային առաջին վկայություններն առանձնացրել է նաև Ն. Բյուզանդացին (Ս.Միմասեան, Ստեփանոս Ուռպելեան. Պատմութիւն տանն Սիսական (Նորայր Ն.Բիւզանդացու անտիպներից), սիւն 10-40): Նա առանձնացրել է ՆՅԲ-ում չվկայված 233 և ՆՅԲ-ում վկայված 238 բառ: Սակայն մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նրա առանձնացրած 238 բառերի որոշ մասը հանդիպում է թե՛ ՆՅԲ-ում և թե՛ մինչ Ստ. Օրբելյանն ապրած հեղինակների երկերում: Հետևաբար, դրանք չեն կարող համարվել Ստ. Օրբելյանի հեղինակած նորակազմություններ: Հմտ. *ասպետ* (տես նշվ. հոդվածը, սիւն 13) ՆՅԲ-ում հանդիպում է Ղ. Փարպեցու, Մ.Խորենացու վկայություններով (ՆՅԲ, հ. 2, էջ 316): Նման օրինակները բազմաթիվ են: Այն բառերը, որոնք առանձնացրել է նաև Ն.Բյուզանդացին, նշվում են աստղանիշով (*) (բառասկզբում):

¹⁹Աստղանիշով (*) (բառավերջում) նշվում են բնագրում մեջբերվող փաստաթղթերում հանդիպող նորահայտ բառերը:

²⁰ՆՅԲ-ն *սրբաքար* բառի համար սխալմամբ վկայում է Մ. Ուռնայեցուն, սակայն բնագրային վկայությունը բերում Ստ. Օրբելյանի երկից:

²¹Բառը Ա.Աբրահամյանն ընդգրկում է գրաբարյան բառարաններում չվկայված բառերի ցանկում: Սակայն այն *ծովամտոյց* ձևով հանդիպում է ՆՅԲ-ում, և բերվում է բնագրային նույն օրինակը:

Ըստ հիմնական ձևույթի նկատմամբ ածանցի գրաված դիրքի՝ ածանցման կաղապարները լինում են *նախածանցավոր* և *վերջածանցավոր*:

aS կաղապարը նախածանցման նվազագույն կաղապարն է՝ *նախաստիճան (1, 70):

Վերջածանցումն առավել հաճախադեպ երևույթ է.

Sa հիմնակաղապարով նորակազմություններ են. րաբունարան (1, 156), *ճոխապէս (1, 150), *խրախարան (1, 81), *մարտօրէն (1, 243), *մշկահում²³:

Sa – *կտանոց (2, 187), *կուրապէս* (2, 194), *փրթուած (1, 208):

(SjS)a – բարդ սերող հիմքին ավելացել է վերջածանց – յիսնանիւթեայ (1, 78):

(SjS^f)a – հոդակապով բարդ հիմքին, որի սերող հիմքը քերականական ձևավորում ունի, ավելանում է վերջածանց. փակակալութիւն (1, 267):

(SS)a – անհոդակապ բարդ հիմքին, որի սերող հիմքը հնչյունափոխված է, ավելանում է վերջածանց. արիւնռշտութիւն (1, 71):

Յարդիիր բարդություններ՝ S-S հիմնակաղապարով.

S^A-S^V – անվանական բաղադրիչ է դարձել ածականը -*կամաթող լինիմ (1, 212), *վերահայեցիկ լինիմ (1, 246), տապակէզ լինիմ (1, 187), *գերեթափ լինիմ (1, 236), *յառաջանիստ լինիմ (1, 89):

Սեկ հարդիիր բարդություն անվանական է՝

(SjS) – Sa կաղապարով - *հոգեմասն բաժին (1, 263):

2. ՆՅԲ-ում և ԱԲ-ում չվկայված նորակազմ բառերի կաղապարները:

Առանձնացրվել են նաև երկի բառային այն նորակազմությունները, որոնք չեն արձանագրվել գրաբարյան բառարաններում՝ ՆՅԲ-ում և ԱԲ-ում:

Քանի որ դեռևս չի կազմվել Ստ. Օրբելյանի երկի համաբարբառը, որում տեղ կգտներ հեղինակի գործածած բառապաշարը, ուստի Ստ. Օրբելյանի երկի բառապաշարի ուսումնասիրությունը կատարվել է համեմատական-զուգադրական մեթոդով: Առանձնացվել են այն բառերը, որոնք տեղ չեն գտել այլ հեղինակների երկերի համաբարբառներում, և պետք է ենթադրել, որ դրանք առաջին անգամ հանդիպում են Ստ. Օրբելյանի երկում: Ատենախոսության մեջ առանձնացվել է 54²⁴ նորակազմություն, որոնք կազմվել են բառաբարդմամբ և ածանցմամբ:

Բառաբարդման կաղապարներ.

SjS–հիմնակաղապարի մասնակաղապարն է՝ **NjN (զոյ.+հոդ.+զոյ.)** - *բերդաչար* (2, 75), իշխանակոյտ (2, 48), կիւրակաջուր* (2, 106), *բոցաթոյն (2, 199), մայրափայտ (2, 161), յոգնակառաչ** (2, 255), *դասապատիւ** (1, 70),

²²Լ.Մ.խաչատրյան, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, էջ 44:

²³ՆՅԲ-ում բնագրային վկայությունը բերվում է Ստ. Օրբելյանի երկից, սակայն սխալմամբ վկայում է Մ. Ուռնայեցուն:

²⁴Այս ցանկում ներառված չեն Ա. Աբրահամյանի առանձնացրած նորակազմությունները՝ *աղեցաւ, աղիւսաբարտար, անգրաւոր, արբելութիւն, բոլորապոյր, բոցաթոյն, գետակարար, խակակիրոթ, ծնրահանգոյց, ծովամատոյց, հաստատագիծ, հեշտապաշտակութիւն, հրաշագիտակ, մեծամենեայ, մոնուանք, սովամածոյց, փարթամաբնակ*, որոնք հեղինակն անդրադառնում է երկի աշխարհաբար թարգմանության ներածության «երկի լեզուն և ոճը» բաժնում, էջեր 50-51: Այս բառաչարքից երեք բառ՝ *աղեցաւ, ծովամատոյց, փարթամաբնակ*, հարկ է նկատի չունենալ: Դրանց վերաբերյալ դիտարկումները և պարզաբանումները ներկայացվել են բառակազմական քննության ժամանակ: Ընդհանուր առմամբ ՆՅԲ-ում և ԱԲ-ում չվկայված բառերի թիվ **68**-ն է):

աղիւսաքարտար** (1, 88), գործապետ**²⁵ (2, 253):

AjN (ած.+հող.+գոյ.) - *բարձրակառայ** (1, 240), նկանախոր** (1, 72), հաստատագիծ** (2, 66):

NmjN (թվ.+հող.+գոյ.) - *բիրապետ** (2, 217):

NjV (գոյ.+հող.+բայահիմք) - *արծանականգ**²⁶(1, 305), *նգովաբեր (2, 111):

SjS - ենթակաղապարի մասնակաղապարներն են՝

NjN (գոյ.+հող.+գոյ.) - *գրատուն** (1, 271), *բնասեռ** (1, 250):

AjN (ած.+հող.+գոյ.) - *գիշամահ** (2, 37):

(SjS)jS - բաղադրող հիմքը սերող հիմքին միանում է հողակապով՝

(NjN)jV ((գոյ.+հող.+գոյ.)+հող.+բայահիմք) - հայրապետադիր** (2, 55), *հայրապետանիստ** (2, 67):

SjS - NjN (գոյ.+հող.+գոյ.) - գողետուն** (1, 291):

SjS - ենթակաղապարի մասնակաղապարն է՝

VjN (բայ+հող.+ գոյ.) - *բացահոր* (1, 277):

Sj(Sa) - *աղօթայարդար (1, 83), ծիրանատեսիլ** (2, 237), մեծաբարոյ (2, 18), *բողաբորբեալ (2, 20), հրաշագիտակ (1, 107):

Sj(Sa) - *անիծաբնակ** (2, 37):

(Sa)jS - *հայրենագիր (2, 104), հայրենացանկ** (2, 209), *հայրենատեր** (2, 14):

(Sa)j(Sa) - հայրենաբաժին** (2, 112):

(aS)jS' - *անիրաւաբարձ** (2, 26):

SS – հիմքերը միացել են առանց հողակապի: Մասնակաղապարն է՝

AN (ած.+գոյ.) - նաւաստոգի* (2, 210), *մեծարիւտ** (1, 260):

Նախածանցավոր ձևերը կազմված են **ան-** ժխտական ածանցի միջոցով՝

aS - *անակն* (1, 308), անհամիմաղ** (1, 262), *անդային (2, 101):

Վերջածանցավոր կազմությունների կաղապարներն են՝

Sa - *արքայուն** (2, 154), *աւերանի** (1, 122), մարացի** (2, 149):

Sa - դիտուած** (1, 144):

(S'a)a - քերականական ձևավորում ունեցող վերջածանցավոր հիմքին ավելանում է վերջածանց - գոյացականութիւն (2, 211):

(Sa)a)a - իշխանաւորութիւն (1, 98):

(Saaa)a - *մշտնջենաւորանոց (1, 245):

S^A – S^N հիմնակաղապարով հարադիր բարդություն է - *հեշտ պաշտակութիւն – (1, 77):

S^A – S^V – հիմնակաղապարով կազմություն - աղեցաւ լինել– Աղիների ցավ ունենալ (փոխ.՝ տառապել), ինչպես՝ Իսկ մեք հանապազ *աղեցաւ* եւ լերդախոց *լինելով* ի վերայ այսր ամենայնի (2, 196):

²⁵Որոշ բառեր, որոնք վկայված չեն ՆՅԲ-ում և ԱԲ-ում, տեղ են գտել Լ.Յովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր» աշխատանքում: Այդ բառերն այսուհետ կնշվեն երկու աստղանիշով (**):

²⁶*Արծանականգ* ձևով է հանդիպում բնագրում, մինչդեռ բառարաններում (Լ.Յովհաննիսյան, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, էջ 59, նաև՝ Մ.Մինասեան, Ստեփանոս Ուռպելեան. Պատմութիւն տանն Սիսական (Նորայր Ն. Բիւզանդացու անտիպներից)) այն ներառված է *արծանականգ* տարբերակով՝ «արծագանք տվող» իմաստով: Կարծում ենք, բառը բաղադրված է *արծան* և *կանգ* արմատներից , ունի «արծանի նման կանգնած» իմաստ և կապված չէ «արծագանք» բառի հետ:

Ն.Բյուզանդացին²⁷, Լ.Յովհաննիսյանը²⁸ և Ա.Աբրահամյանը նշում են միայն «աղեցաւ» բառը²⁹ «աղիների ցավ» իմաստով, սակայն կարծում ենք, որ սա պետք է դիտել որպէս հարադրավոր բարդություն՝ աղեցավ լինել՝ բաղադրված ածականից և բայից՝ «տառապել» իմաստով, ինչպէս դիտվել է լերդախոց լինել հարադիր բարդությունը:

Այսպիսով, ՆՅԲ-ում և ԱԲ-ում չվկայված նորակազմությունները 68-ն են, որոնք քննվում են նաև ըստ խոսքիմասային պատկանելության. 172 նորակազմ բառից 100-ը ածական է, 55-ը՝ գոյական, 13-ը՝ բայ, 4-ը՝ մակբայ:

ԳԼՈՒԽ III. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության այս գլուխը բաղկացած է երկու մասից.

Ա) ՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՋՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հոլովական համակար-ի յուրահատկություններ: Ստ. Օրբելյանի երկի լեզվի ուսումնասիրությունը վկայում է, որ XIII դարում հոլովման համակարգում նկատելի են փոփոխություններ (հոլովական անցումներ, զուգաձևություններ): Գոյականների հոլովական զուգաձևությունները առանձնացվել են ըստ հատուկ և հասարակ տեսակների:

Հատուկ գոյականների հոլովական զուգաձևությունները ներկայացվում են երկու առունով՝ անձնանունների և տեղանունների:

ա) **Անձնանունները** ժամանակի ընթացքում ձեռք են բերել նոր հոլովիչով հոլովվելու հատկություն՝ միևնույն ժամանակ պահպանելով իրենց նախկին հոլովիչները: Պատմիչը շատ դեպքերում գրեթե հավասարաչափ է կիրառում տարբեր հոլովիչներով հոլովված հատուկ անունները. **Ո ի Ի - Աշոտոյ // Աշոտի, Շապիոյ // Շապուհի, Ի Ո Ռ - Կայենի // Կայենոյ, Ի Ո Ա - Ելիկումի // Ելիկումայ, Որմզդի // Որմզդայ, ՌԻ Ա - Մարիամու // Մարիամայ, Աբրահամու // Աբրահամայ** և այլն:

Անձնանունների հոլովման համակարգում գերիշխում է **Ի** հոլովիչը:

բ) **Տեղանունները** նույնպես Ստ. Օրբելյանի երկում հոլովական զուգաձևություն են հանդես բերում: Այս շարքում համեմատաբար իշխող դեր ունի **ՈԻ** հոլովիչը, ինչպես՝ **Ո ի ՌԻ - Կեսարիոյ // Կեսարու, Տաթևոյ // Տաթևու, Ո ի Ա - Խոտոյ // Խոտայ, Ի Ո ՌԻ - Բաղաբերդի // Բաղաբերդու, Ա Ո ՌԻ - Վանեվանաց // Վանեվանուց**: Երկում հանդիպում են հիմքակազմական զուգաձևություններ, որոնք հատուկ են թե՛ անձնանուններին, թե՛ տեղանուններին, ինչպես՝ **Բա- րատունոյ // Բա- րատունոյ, Բջնոյ // Բջնոյ**. այս երևույթը բնորոշ էր միջին հայերենի հոլովման համակարգին:

XIII դ. հոլովման համակարգում արդեն նկատելի էր խառն հոլովումների պարզեցում, որը հետագայում հանգեցրել է հոլովման այդ տիպի վերացմանը: Երկում հանդիպում են բառեր, որոնք հին շրջանում ունեին խառն հոլովում, սակայն գտնում ենք զուգահեռ այլ պարզ հոլովիչով հոլովված տարբերակներ ևս. **Ի - Ա Ո Ռ - քարիմ (1, 130) // քարոյ (2, 113)**:

Փոփոխություններ նկատվում են ինչպես խառն, այնպես էլ պարզ հոլովումների դեպքում. մի շարք բառեր, որոնք գրաբարում հայտնի էին որպես **Ո**

²⁷ Մ.Մինասեան, նշվ. հոդվ., սիւն 11:

²⁸ Լ.Յովհաննիսյան, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, էջ 24:

²⁹ Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 50:

հոլովման պատկանող, հոլովվում են նաև **Ի** հոլովիչով. *ծորի* (2, 171), *արծաթի* (2, 185), *ժողովի* (1, 141), *մարմնի* (2, 258), *աթոռի* (2, 44): Սա հանդիպում էր միջին հայերենում:

Երկի քննության ժամանակ երբեմն հանդիպում են գոյականներ, որոնք գրաբարում հոլովվում էին **Ի** հոլովիչով, սակայն երկում հանդիպում են նաև մեկ այլ՝ **Ո** հոլովիչով (բառարանները (ԵՅԲ, ԱԲ) չեն արձանագրում). **Ի // Ո** - *բերդի* (1, 293), *բերդոյն* (1, 122) և այլն:

Գրաբարյան բառարանները արձանագրում են, որ սաղաւարտ բառը պատկանում է **Ի** հոլովման, սակայն երկում հանդիպում է նաև **Ա** հոլովիչով հոլոված ձևով՝ *սաղաւարտիւն* (1, 78), *սաղաւարտաւն* (1, 79):

Բնասեռ բառն առաջին անգամ հանդիպում է Ստ. Օրբեյանի երկում. բնագրում բառը երկու ձևով է հանդիպում՝ *բնասեռիւ* (1, 250), *բնասեռով* (1, 277): Բառը ենթադրաբար պատկանում է **Ի** հոլովման, իսկ *-ով* վերջավորությունը միջին հայերենում գործիականի *ով-ի* կազմության տարածման հետևանք է:

Գրաբարում *-ուած* ածանց ունեցող բառերը պատկանում էին **Ո** հոլովման: Ուսումնասիրվող երկում հեղինակն այս առումով հետևել է դասական հայերենին, որոշ բառեր, սակայն, հոլովված են **Ի** հոլովիչով, ինչպես՝ *ներկուածի* (2, 47), *յօրինուածի* (1, 271), *կացուածի* (1, 221), **Ա** հոլովիչով՝ *յօրինուածօք* (1, 292):

Յոլովակազմական յուրահատկություններ: Յոլովման համակարգում հանդիպում են հոլովածների կազմության որոշ փոփոխություններ. հայցական հոլովում երբեմն հոգնակի թվի *-ք* մասնիկը պահպանվում է՝ *ս-ի* վերածվելու փոխարեն, ինչպես՝ *զեկեղեցիքս* (2, 241), *զերկնաւորքս* (1, 150), *զվանքն* (2, 45) և այլն: Հայցականի այսպիսի կազմությունը բնորոշ էր միջին հայերենին³⁰:

Որոշ բառեր, որ պատկանում են **Ի-Ա** խառն հոլովման, գործիական հոլովում **Ո** հոլովման պատկանող բառերի նմանությամբ ստանում են *-ով* մասնիկը: Գործիական հոլովում *-ով* վերջավորության ընդհանրացումը ևս միջինհայերենյան երևույթ էր³¹. *ցամաքով* (1, 262), *ծորակով* (1, 277) և այլն:

2. Գոյականի թվակազմությունը: Դեռևս գրաբարում հոգնակերտ **ք** մասնիկին զուգահեռ գործածվում էին որոշ մասնիկներ, որոնք արտահայտում էին հավաքականության իմաստ (**-տի**, **-անի**, **-իկ**, **-որայք**, **-եար** և այլն): Դրանք ժամանակի ընթացքում սկսեցին տարածում գտնել և արդեն միջին հայերենում առավել հաճախակի էին հանդիպում: Ստ. Օրբեյանի երկում հոգնակին մեծ մասամբ կազմվում է **-ք** մասնիկի միջոցով: Դրան զուգահեռ երկում հանդիպում է նաև *-եր* մասնիկը, որն առավել գործուն է դարձել միջին հայերենի շրջանում և տիրապետող՝ ժամանակակից հայերենում. *բերդեր* (2, 81), *տեղեր* (2, 13), *ետեր*, *նաւեր* (1, 227), *տօներ* (2, 163), *բերդերոյն* (2, 143), *ործատներ* (1, 271), *վաներ* (2, 221):

Գոյականի հոգնակի թիվը, շարունակելով պահպանել հին գրական հայերենի կազմության առանձնահատկությունները, ձեռք է բերում արտահայտության նոր ձևեր, որոնց մի զգալի մասն արդեն իր տեղը գտնում է թվակազմության համակարգում: Հետագայում գերակշռող դեր ունեցող *-եր* մասնիկի գործածությունը երկում վկայում է, որ հոգնակի թվակազմության մեջ զգալի տեղաշարժերը կայունացել էին:

³⁰Տե՛ս Ալեմարկների միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Ե., 1975, էջ 65:

³¹Ս.Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1981, էջ 237:

3. Բայական համակարգի առանձնահատկություններ: Ստ. Օրբեյանի երկուն լեզվական փաստերը վկայում են, որ բայական համակարգի մի շարք նոր իրողություններ օրինաչափության վերածվելու միտում են դրսևորում:

Սահմանական եղանակի անցյալ անկատարի III դեմքը սկսում է ավելի հաճախ դրսևորվել *–իւր* մասնիկի միջոցով (կրավորական սեռի նշանակությամբ): Այն դրվում է ներգործական սեռի բայերի ներկայի հիմքի վրա՝ կրավորականի իմաստով՝ *կարծիւր* (1, 207), *կերակրիւր* (2, 83) և այլն:

Երկուն տալ անկանոն բայի անցյալ կատարյալ ժամանակաձևը կազմվում է միջին հայերենում տարածված *տվի* (2, 163) ձևով: Ժամանակաձևերը հաճախ հանդես են գալիս երկրորդական կիրառությամբ. *անկատար ներկան*՝ ժամանակակից հայերենի ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների ապառնիի, սահմանականի անցյալ կատարյալի, անցյալ անկատարի իմաստներով, *անկատարը անցյալ*՝ անկատար ներկայի, ժամանակակից հայերենի հարակատար դերբայի, ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների անցյալի նշանակություններով:

Ստորադասական եղանակի երկու ժամանակաձևերը՝ առաջին և երկրորդ ապառնիները, կազմության առումով յուրահատկություն չեն դրսևորում: Գործածության հաճախականության առումով առաջին ապառնին զիջում է երկրորդ ապառնուն: Առավել հաճախ երկրորդ ապառնի ժամանակաձևը հանդիպում է արդի հայերենի պայմանական եղանակի նշանակությամբ:

Յրամայական եղանակի ժամանակաձևերից երկուն առավել հաճախ հանդիպում է բուն հրամայականը:

Աիջին հայերենի շրջանում ձևավորվել է հարակատար դերբայը՝ *–ած* մասնիկով. այն հանդիպում է ինչպես անկախ կիրառությամբ (որոշիչ դերով)՝ *հաստատած* (2, 38), *յաջողած* (2, 61), *երկիւղած* (1, 297) և այլն, այնպես էլ օժանդակ բայի հետ՝ կազմելով բաղադրյալ ժամանակաձևեր՝ *ոչ էին կարած* (1, 62), *առած էր* (2, 157), *հաստատած էին* (2, 72):

Յաճախ են հանդիպում *–իլ* դերբայական վերջավորությամբ ներգործական չեզոք և հասարակ սեռի բայեր՝ *ժողովիլ* (2, 27), *դե՛ երիլ* (1, 246), *ծնանիլ* (1, 46) և այլն:

Բայական համակարգում արձանագրված փոփոխությունները տեղի էին ունեցել բայի դրական խոնարհման համակարգում, իսկ ժխտական խոնարհումը պահպանել է կազմության հինհայերենյան ձևերը:

Անշուշտ, հանդիպող բոլոր քերականական իրողությունները ընդհանրացած և կայունացած ձևեր չէին: Դրանցում առկա շեղումները կարող էին գրչագրական սխալներ, հեղինակային-անհատական կազմություններ կամ ժողովրդախոսակցական շերտի ազդեցության հետևանք լինել: Այնուամենայնիվ, քննվող երկուն հանդիպող քերականական իրողությունների մի մասը հետազայում դարձել է կանոնավոր ձև նախ՝ միջին հայերենին, ապա՝ աշխարհաբարին:

Ք) ՇԱՐՎՅՅՈՒՍԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախադասության -լխավոր անդամների հարաբերությունները: Ստ. Օրբեյանի երկի շարահյուսական յուրահատկությունները դրսևորվում են ենթակայի թեք հոլովներով արտահայտությամբ (ենթական դրվում է սեռական, տրական և հայցական հոլովներով. երկի քննությունը փաստում է, որ շարահյուսական հինհայերենյան կառույցներ պահպանվել են նաև XIII դարի հայերենում), ենթակայի և ստորոգյալի թվային անհամաձայնությամբ:

2. Նախադասության երկրորդական անդամներ. - ոչականական անդամի լրացումների համաձայնությունը: Երկուսն հանդիպում են որոշի նախադաս համաձայնության կիրառության դեպքեր (*չարա- լիսին Ջաֆարի* (1, 215), *անճորհին Սահմեսայ* (1, 216)), հաճախադեպ է միավանկ ածականների նախադաս անհամաձայնությամբ գործածությունը (*մեծ ողբովք* (1, 128), *մեծ պար- ևօք* (1, 94)), հետադաս որոշի անհամաձայնությամբ կիրառություն (*թզոյ մի* (2, 170)), դասական թվականներով արտահայտված որոշիչները երբեմն չեն համաձայնում (*յառաջին նահապետն* (1, 49) (փոխ.՝ *յառաջնմէ*): Ցուցական դերանուններով արտահայտված որոշիչները հաճախ չեն համաձայնում (*ի սոյն ազ- է* (1, 139), *ինոյն Սիսական տոհմէ* (1, 290)): Որոշիչ-որոշյալ կապակցությունը հանդես է բերում թվային անհամաձայնություն. *մի* անհոգնական թվականը գործածվում է հոգնակի գոյականի հետ՝ էր *ջրաղացք մի* (1, 86): Հաճախադեպ է հատկացուցչի նախադաս կիրառությունը. *Սահակայ որդի, Սիւնեաց եպիսկոպոսի, Վասիոյ վանականի, Ներսէի որդեաց* (1, 255):

Ստացական դերանուններով արտահայտված հատկացուցիչը գործածվում է առանց համաձայնության (*յիմ եղբորէն* (1, 264) (փոխ.՝ *յիմէ եղբօրէ*) *յիմ հօրէն* (1, 262) (փոխ.՝ *յիմէ հօրէ*): *Քո* դերանունը նախադաս գործածվելիս գրաբարում սովորաբար հոլովվում էր *քոյ* հիմքով, սակայն երկուսն նախադաս դիրքում *քո* հիմքով է կիրառվում՝ *քո ձեռանքդ* (2, 192): Որոշիչ և հատկացուցչի՝ վերը նշված առանձնահատկությունների որոշ մասը բնութագրական էր նաև հին հայերենին, սակայն լեզվի պատմական զարգացման ընթացքը ցույց է տալիս, որ դրանց մի մասը հետագա դարերում խոսակցական լեզվի և այլ գործոնների ազդեցության հետևանքով վերածվել է օրինաչափության:

3. Նախադասությունների կառուցվածքային տեսակները: Քննվող երկուսն հանդիպում են նախադասության կառուցվածքային բոլոր տեսակները՝ դիմավոր, անվանական, դերբայական՝ անկախ, կիսանկախ և կախյալ տեսակներով, որոնք պահպանել են գրաբարյան օրինաչափությունները:

4. Նախդիրների և նախադրությունների - ործածությունը: Ստ. Օրբելյանի երկուսն գրաբարյան նախդիրները և նախադրությունները հաճախական գործածություն ունեն: Դրանք շարահյուսական կառուցվածքում հանդես են բերում որոշակի խախտումներ, որոնց մի մասը թեև խիստ հազվադեպ, բայց հանդիպում է նաև հին շրջանի մատենագիրների երկերում, իսկ որոշ իրողություններ էլ նոր են:

Երկուսն առատորեն կիրառված նախդիրները, գործածվելով այս կամ այն հոլովով խնդրի հետ, արտահայտում են զանազան իմաստներ: Հաճախ են կիրառված *զ* և *ի* նախդիրները, իսկ *ց*-ն և *ըստ*-ը՝ համեմատաբար սակավ: Երկուսն ամենից հաճախ կիրառվում է *ի* նախդիրը՝ տարբեր հոլովածների և անորոշ դերբայի հետ արտահայտելով զանազան իմաստներ: Միջին հայերենում առավել տարածված *զ+հայցական հոլով* կառույցն է հանդիպում երկուսն՝ *ի+հայցականի* փոխարեն. *Ջայն - իշեր* հսկմամբ խնդրեցին զթողութիւն կնոջն այն (1, 120): *Չորդիսն* Իսմայելի ոչ զի սիրտ նոսա (1, 189)³²:

Ուսումնասիրվող երկուսն հանդիպում են նախդիրների միաժամանակյա (կրկնակի) գործածության դեպքեր. *ի յիմ* (2, 163), *ի յկրտաւագոյայ, ի յկրլաշարայ* (2, 12):

³²Վ.Քոսյան, Միջին հայերենի բառակապակցությունները, Ե., 1984, էջ 161:

Առ նախդիրը որոշ դեպքերում զեղչվում է. Գնաց փախստեայ ... եւ բնակեցաւ յանապատի ուղղափառ միայնակեցի մի (1, 177): Երբեմն զեղչվում է ընդ նախդիրը. Բայց գծողովն Քաղկեդոնի խոստովանեալ էր ... եւ 150իցն, որ ի Կոստանդնուպօլիս, ... եւ երկերիւրոցն որ յեփեսոս (1, 163):

Ընդ նախդիրը առավել կենսունակ է. այն ավելի հաճախ է կիրառվում, քան V դարի հայ մատենագիրների երկերում³³:

Գրաբարում մերձ նախադրությունը պահանջում էր *ի* և *առ* նախդիրներ կրող հայցական հոլովով խնդիր: Ստ. Օրբելյանի երկում, սակայն, մերձը հանդիպում է առանց նախդիրների՝ պահանջելով սեռական հոլովով խնդիր: Չմնտ. եւ բղխէ մերձ նմին (2, 91):

Յետ նախադրությունը, որ սովորաբար պահանջում էր սեռական հոլովով խնդիր, երկում հանդիպում է նաև տրական հոլովով լրացումով. Յետ այսմ մեռան իվանէ (2, 125):

Վասն նախադրությունը պահանջում էր սեռական հոլովով խնդիր, սակայն հանդիպում է նաև հայցական հոլովով խնդրով. վասն այն (2, 140):

Ի վերայ նախադրությունը երկում գործածվում է տրական հոլովով խնդրի հետ՝ Նզովեալ եղիցի ... ոչ իշխանութիւն ի վերայ այսմ տեղեաց (2, 103):

Իքրել նախադրությունը հայցական հոլովով խնդիր էր առնում, սակայն երկում հանդիպում է նաև տրական հոլովով. ինչպես՝ իքրել Աստուծոյ (2, 19):

Չազվադեպ նախադրություններ շարադասական շեղումներ են դրսևորում.

Ի ձեռն նախադրությունը սովորաբար անընդմիջարկելի է, սակայն երբեմն այդ կառույցը խախտվում է՝ ի ծածուկ ձեռն (2, 217):

Ի վերայ նախադրությունը վկայված փաստաթղթերում հանդիպում է ոչ սովորական՝ տրոհված կիրառությամբ: Չմնտ. 100.000 նալաթ ի նորա վերայ եղիցի (2, 43):

Շարահյուսական մակարդակում նկատվող որոշ նոր տարրեր միջին հայերենում վերածվեցին օրինաչափության:

ԳԼՈՒԽ IV. ԵՐԿԻ ԼԵԶՎԻ ՈՃԱԿԱՆ ՅՈՒՐԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Պատմութիւն նահանգին Սիսական» երկում հանդիպում են գրաբարին հատուկ ոճավորման տարրեր միջոցներ: Չեղինակային պատումին զուգահեռ՝ շարադրված են նաև գրություններ՝ կազմված տարրեր անձանց կողմից, ինչը հնարավորություն է տալիս Ստ. Օրբելյանի ոճը քննելիս նաև ընդհանուր պատկերացում կազմել ժամանակաշրջանի լեզվամտածողության վերաբերյալ: Դրանք զգալիորեն տարբերվում են հեղինակային շարադրանքից:

Ստ. Օրբելյանի երկի լեզվին բնորոշ են ոճական այնպիսի հնարքները, որոնք տարածված էին դասական գրաբարում: Դրանք են՝ ավելադրությունը (գոյականի սեռական հոլովով՝ զվրեժ քինուն (1, 99), զբօթ ուժին (1, 90), բայական ավելադրություններ՝ խորիէի, խոկայի, (1, 46), նիւթեր, նօթէր (1, 228), անորոշ և անցյալ դերբայներով՝ եղծանելով կամեր եղծանել (2, 81), կամելով կամեր (2, 145), քանդեալ աւերէին (1, 74), պեսպիսութիւնը (Լայր սաստկա-ին և աղիողորմ ողբով հառաչէր (1, 121)), վերագականը քանձրագականի փոխարեն (շահ օ-տուրեան (1, 53), տուրառնութեան (1, 103) և այլն):

³³Վ.Քոսյան, Միջին հայերենի բառակապակցությունները, էջ 19:

Խոսքն առավել գեղեցիկ դարձնելու նպատակով հեղինակը հաճախ գործածում է պատկերավորման այլ միջոցներ՝ *համեմատություններ, մակդիրներ, փոխաբերություններ*: Որպես ոճավորման միջոցներ հանդիպում են *կրկնությունը, թվարկումը, երկխոսությունները, դարձվածային միավորները*:

Ոճական տեսակետից հետաքրքրական են նաև վրացերենից կատարած հանգավոր թարգմանությունները, որոնք նա մեջբերում է երկուն: Հայտնի չէ, թե թարգմանվող հատվածները (2, 132-133) գրված են եղել չափածո՝ հանգավորված, սակայն Ստ. Օրբելյանը թարգմանության ժամանակ պահպանել է տաղաչափության կանոնները, հանգավորել խոսքը՝ այն դարձնելով գեղարվեստական ու հնչեղ³⁴:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի լեզվական համակարգի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս XIII դ. լեզվի գոյավիճակի վերաբերյալ կատարել որոշ եզրակացություններ:

1. Ստ. Օրբելյանի երկը XIII դ. պատմագրության լավագույն նմուշներից է, որում հանդիպում են թե՛ հինհայերենյան, թե՛ նոր շրջանում ի հայտ եկած լեզվական իրողություններ:

2. Երկի լեզվում նկատելի են փոփոխություններ հնչյունական համակարգում: Կատարված ուսումնասիրությունները վկայում են՝

ա) Ձայնավորների հնչյունափոխությունը նոր դրսևորումներ է ձեռք բերում. *ու>օ, օ>ու* և այլն, որոնք առավել բնութագրական են լեզվի պատմության միջին հայերենի շրջանին: Երկբարբառները, ընդհանուր առմամբ պահպանելով հնչյունափոխության գրաբարյան դրսևորումները, ցուցաբերում են նաև առավել ուշ շրջանում ի հայտ եկած օրինաչափություններ:

բ) Առավել հաճախ հանդիպում են փոփոխություններ բաղաձայնական համակարգում (ձայնեղ բաղաձայնների դիմաց առկա են խուլ բաղաձայններ, խուլ բաղաձայնների դիմաց՝ ձայնեղներ, շնչեղ խուլերի դիմաց հանդիպում են ձայնեղներ և այլն):

3. Երկի բառապաշարի քննության ժամանակ ուսումնասիրվել են իմաստային նոր կիրառություն ունեցող բառերը, փոխառությունները և հեղինակային նորակազմությունները:

ա) Երկում հանդիպող որոշ բառեր իմաստային փոփոխություններ են կրել և երկում հանդիպում են նոր իմաստներով:

բ) Բառապաշարում զգալի թիվ են կազմում փոխառությունները: Հանդիպում են հին և նոր փոխառություններ: Հանդիպող բառերը փոխառություններ են վրացերենից, արաբերենից, պարսկերենից, թաթարերենից, պահլավերենից, հունարենից, ասորերենից, լատիներենից, հին ֆրանսերենից: Ստ. Օրբելյանի երկի փոխառությունների մեջ գերակշռում են *կրոն և հավատալիք, օրենք և իշխանություն* նշանակող բառիմաստային-թեմատիկ խմբերը:

³⁴Այդ բանաստեղծական թարգմանությունը հանգավորման, տաղաչափության տեսակետից նույնանուն է Ստ. Օրբելյանի հեղինակած «Ողբ ի սուրբ կաթողիկէն» չափածո ստեղծագործության հետ (հմմտ. Ստ. Օրբելյան, Ողբ ի սուրբ կաթողիկէն, յառաջ. և ծան. Կ. Կոստանեանցի, Թիֆլիս, 1885):

4.Ստ. Օրբեյանի երկի լեզվական առանձնահատկություններից են նորակազմությունները: Կատարված համեմատական հետազոտության ժամանակ համարելով երկում հանդիպող բառերը հրապարակում առկա գրաբարյան բառարանների տվյալների հետ՝ արձանագրվել է, որ երկում հանդիպող նորակազմությունները **172-ն** են, որոնցից 67-ը ներառված են ՆՅԲ-ում: ԱԲ-ում հանդիպում է **ևս 37** բառ, որոնց՝ Ստ. Օրբեյանի երկին պատկանելը հաստատում է Լ.Յովհաննիսյանի նորակազմ բառարանը: Մի շարք բառեր չեն արձանագրել ՆՅԲ-ն և ԱԲ-ն: Այդ նորակազմությունները 68-ն են: 14 նորակազմություն չի հանդիպում գրաբարյան որևէ բառարանում: Ըստ որում՝ նորակազմություններից 19-ը հանդիպում է երկում մեջբերված գրություններում:

Նորակազմությունները քննվել են ըստ բառաբարդման և ածանցման կաղապարների. գերիշխում է բառաբարդման կաղապարը. առավել տարածված է SJS հիմնակաղապարը: Ածանցման կաղապարներից գերիշխող է վերջածանցման կաղապարը՝ Sa:

Նորակազմությունները, ըստ խոսքիմասային պատկանելության, գոյականներ, ածականներ, բայեր և մակբայներ են:

5.Քերականական համակարգը բնութագրվում է էական փոփոխություններով.

ա) Հոլովման համակարգում նկատվում է հոլովիչների զուգաձևության ակտիվացում: Ձուգաձևություն դրսևորում են ինչպես հատուկ, այնպես էլ հասարակ անունները: Նկատվում է խառն հոլովումների պարզեցում: Բառերի հոլովման համակարգում միտում է նկատվում դեպի **Ի** հոլովիչը:

Հոլովման համակարգում կազմության միջինհայերենյան ձևերն արդեն զգալի տարածում են գտել, մասնավորապես՝ գործիական հոլովի *-ով* վերջավորությունը, հայցական հոլովի հոգնակի թվակազմությունը:

բ) Գոյականի թվի կարգում *-եր* մասնիկի գործածությունը վկայում է, որ թվակազմության մեջ արդեն նկատելի էին էական տեղաշարժեր:

գ) Բայական համակարգում նկատելի են իմաստային տեղաշարժեր. սահմանական և ստորադասական եղանակների ժամանակաձևերը հանդիպում են նաև երկրորդական կիրառություններով:

Անորոշ դերբայի *-իչ* վերջավորությունը ընդհանրանում է ինչպես չեզոք, այնպես էլ ներգործական և հասարակ սեռի բայերի դեպքերում:

6.Երկի լեզվի շարահյուսական մակարդակում նկատվում են մի շարք փոփոխություններ. ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության և որոշիչ-որոշյալի, հատկացուցիչ-հատկացյալի համաձայնության խախտումներ են արձանագրվում: Նկատվում են հատկացուցչի նախադաս գործածության կայունացման միտումներ:

Նախդիրները և նախդրությունները դրսևորում են շեղումներ հոլովառության տեսակետից և գործածվում են որոշակի փոփոխություններով:

7.Քննվող երկին բնորոշ են ոճավորման տարբեր միջոցներ՝ ավելադրություն, պեսպիսություն, վերացականը թանձրացականի փոխարեն, խոսքը հարուստ է պատկերավորման միջոցներով՝ մակդիր, փոխաբերություն, համեմատություն, կրկնություն, թվարկում, երկխոսություն և այլն: Սրանց զուգահեռ հանդիպող դարձվածքները վկայում են երկի լեզվի բառապաշարի բազմազանության մասին:

Ստ. Օրբեյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի լեզվաոճական քննությունը ցույց է տալիս, որ XIII դարի մատենագրության լեզվում ցայտուն

երևում են հետդասական հայերենից միջին հայերեն անցումային փուլի դրսևորված լեզվական առանձնահատկությունները:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են.

1. Ավետիսյան Ա., Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի նորակազմությունների կաղապարները, «Հայագիտական հանդես», Երևան, 2011, № 1 (15), էջ 29-36:

2. Ավետիսյան Ա., Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի բառային փոխառությունները, «Հայագիտական հանդես», Երևան, 2011, № 2-3 (16-17), էջ 25-32:

3. Խաչատրյան Լ., Ավետիսյան Ա., Գրաբարի հնչյունական համակարգի առանձնահատկությունները XIII դարում (ըստ Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի), «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, № 1, Երևան, 2013, էջ 112-119:

АВЕТИСЯН АНИ ГАМЛЕТОВНА

ЯЗЫК И СТИЛЬ ТРУДА "ИСТОРИЯ СЮНИКА" СТЕПАНОСА ОРБЕЛЯНА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 – “Армянский язык”

Защита состоится 9-го декабря 2013 года, 15⁰⁰ часов, на заседании специализированного совета по лингвистике 019 ВАК действующего при Институте языка им. Р.Ачаряна Национальной Академии Наук РА (0015, Ереван, ул. Григора Лусаворича 15).

РЕЗЮМЕ

Данная диссертация посвящена исследованию языка и стиля труда историка XIII века Степаноса Орбеляна “История Сюника”. В диссертации дается синхронное описание грамматической структуры армянского языка в период XIII века.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения, списка использованной литературы и составляет 150 компьютерных страниц.

Во введении представлены некоторые факты жизнедеятельности Ст. Орбеляна, выявлены источники труда “История Сюника” и дается ее тематический охват.

Актуальность темы. Перевод труда Степаноса Орбеляна на новоармянский язык был выполнен А.А.Абраамяном, который во введении к переводу подчеркивает, что труд имеет большую ценность с языковой точки зрения и нуждается в отдельном исследовании. Однако по сегодняшний день язык труда Ст.Орбеляна не был подвергнут многостороннему и доскональному исследованию, чем и обусловлена актуальность темы диссертации.

Цель исследования. Основная цель диссертации – показать общую характеристику труда Ст. Орбеляна, имея в виду то обстоятельство, насколько древнеармянские языковые реалии сохранены в труде автора, а также показать ту роль и значение, которые имел труд Ст. Орбеляна в данной подстадии развития армянского языка XIII в..

Научная новизна. Язык труда Ст. Орбеляна впервые подвергается многостороннему и основательному исследованию, охватывая все языковые уровни. Некоторые языковые реалии, выявленные при исследовании фонетической системы (например: наличие буквы “ф”) свидетельствуют, что “История” Ст. Орбеляна отреагировала на изменения, имевшие место в фонетической системе в XIII веке.

Методологические основы. Для рассмотрения представленных задач методологической основой являются как общие, так и частные методы научного исследования. Из методов исследований были выделены методы языковой логики, индукции, историко-сравнительный (диахронический), описательный (синхронный), системно-структурный, а также аналитический прием, который охватывает словообразовательные принципы, принятые в структурном языкознании, который языковые структуры рассматривает по основным моделям и их соответствующим частичным моделям.

Теоретическое и практическое значение. Теоретическая ценность исследования – способствовать комплексному изучению и интеграции истории языка, в частности фонетической, словообразовательной, а также грамматической систем

языка армянской историографии XIII века, исходя из данных труда Ст. Орбеляна “История Сюника”.

Результаты исследования можно применять в высших учебных заведениях при изучении курсов “Исторической грамматики”, “Истории армянского языка”.

В первой главе (“Особенности фонетической структуры”) представлены фонетические реалии, которые не были типичны для древнеармянского и наиболее характерны для среднеармянского языка.

Были рассмотрены новые случаи чередований гласных, дифтонгов и трифтонгов, а также даны изменения, имевшие место в системе согласных, большая часть которых в процессе дальнейшего развития языка не превратилась в закономерность и осталась на орфоэпическом уровне.

Во второй главе диссертации (“**Особенности лексики**”)

представлена лексика труда, были отделены слова с новым значением, заимствования, новообразования.

Заимствованные слова были рассмотрены по происхождению и по лексико-тематическим группам. Они перешли из арабского, персидского, грузинского, греческого, ассирийского, татарского, среднеперсидского (пехлевийского), латинского, старофранцузского языков. Слова, встречающиеся с новым значением, рассматриваются в двух аспектах: слова, которые использовались как с древнеармянским, так и с новоприобретенным значением, и слова, которые использовались с новыми словарными значениями, причем эти последние значения не были зарегистрированы в известных словарях габара.

Выделены авторские неологизмы (172 словарных единиц) и представлены их словообразовательные формы, выраженные значения и значимости в качестве частей речи.

В третьей главе (“Грамматические реалии”) рассматриваются грамматические особенности языка труда Ст. Орбеляна. На морфологическом уровне значительны изменения по сравнению с постклассическим армянским: заметно обилие падежных комбинаций, использование таких форм для образования множественного числа, которые наиболее распространились и стали закономерностью в период среднеармянского языка. В глагольной системе видны незакономерные проявления с тенденциями стабилизации.

На синтаксическом уровне изменения заметны в расстановке и согласовании членов: определение – определяемое слово, определение (существительное в род. падеже) – определяемое слово, а также при использовании предлогов.

В четвертой главе (“Стилистические особенности языка труда”) были рассмотрены языковые и стилистические особенности труда (средства выражения, как авторской речи, так и вводных документах).

В заключении отражены выводы, основанные на исследовании.

Исследование языка данного труда Ст. Орбеляна дает возможность составить представление об особенностях переходной стадии из древнеармянского в среднеармянский.

ANI H. AVETISYAN

**THE LANGUAGE AND STYLE OF STEPANOS ORBELYAN'S WORK OF
"HISTORY OF SYUNIK"**

Dissertation for the degree of Candidate of philological Sciences for speciality 10.02.01 – "Armenian language".

The defense will be held on December 9, 2013, at 15.00, at the address: 0015, Yerevan, Grigor Lusavorich Str. 15, Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia, at the session of Specialized Council on Linguistics 019 HAC.

SUMMARY

This dissertation covers the research of the language and style in the work "History of Syunik" by Stepanos Orbelyan, historian of the XIII century. The simultaneous description of the Armenian grammatical structure over the XIII century is given in the dissertation.

The dissertation consists of the introduction, four chapters, conclusion, list of the literature used, and makes 150 computer pages.

The introduction represents certain facts of St. Orbelyan's life activities. Sources of "History of Syunik" and its thematic coverage are brought to light.

The actuality of the research. The translation of the work by St. Orbelyan into the New Armenian language was made by A.A.Abraamyan, who, in the introduction to the translation, emphasizes that the work is of great value from a linguistic point of view and needs a separate study. However, to date, the language of work by St.Orbelyan never underwent any multilateral and thorough investigation, therefore the actuality of this dissertation topic is conditioned.

The goals of the study. The main purpose of the dissertation is to show a general description of work of St. Orbelyan, referring to the fact, as far as the Old Armenian realities stored in the author's work, and also to show the role and importance of that work, which St. Orbelyan had in this substage of the Armenian language development XIII c..

The scientific novelty of the study. The language of St. Orbelyan's work is firstly exposed to multilateral and thorough investigation, covering all linguistic levels.

Some linguistic realities, seen in the study of the phonetic system (for example: the presence of the sound "f") evidence that the work of St. Orbelyan is one of the first who reacted to the changes that have taken place in this system in the XIII century.

Methodological bases of the research. For the consideration of those problems the methodological grounds are both general and particular methods of scientific investigation. Among the research methods the methods of linguistic logic, induction, historical and comparative (diachronic), descriptive (synchronous), systemic-structural methods, and analytical techniques were identified, the latter covers word-formation principles adopted in structural linguistics, and language structures are considered the basic models and their respective partial forms.

The theoretical and practical importance of the dissertation. The theoretical value of the study is to promote the comprehensive study of the history of language and integration, in particular the phonetic, word-formation, as well as the grammatical system of the

language of the Armenian historiography of the XIII century, based on the data of work St. Orbelyan "History of Syunik".

The research results can be used in higher education in the study of courses "Historical Grammar", "History of the Armenian language."

The first chapter ("The peculiarities of the phonetics") comprises the phonetic realities appearing in the work, which were not regular for the Old Armenian and are more descriptive for the Middle Armenian. The new cases of interchanges of vowels, diphthongs and triphthongs are examined, as well as the changes taken place in the consonants system are given, the greater part of which failed to turn into a regularity during the further development of the language and remained at the orthoepic level.

The vocabulary of the work is introduced **in the second chapter ("The vocabulary peculiarities")** of the dissertation: words with new use of meaning are distinguished, adoptions, neologisms.

The loanwords were researched according to the transition period, their origin and semantic-thematic groups. They came from Arabian, Persian, Georgian, Greek, Assyrian, Tatar, Middle Persian, Latin and Old French.

The words occurring with a new use of meaning have been studied in two parts: in one case we observed the words, which were used either in Grabar meaning, or in the newly acquired meaning, in the second case, the words, which were used in new lexical meanings; at that the latter meanings were not recorded in the well-known dictionaries of Grabar.

The author's neologisms are also distinguished (172 word units), and their word-formation forms, the meanings expressed and the values as parts of speech are presented.

The third chapter ("Grammatical realities") introduces the grammatical peculiarities of the language in the work researched. At the morphological level changes as compared to the postclassical Armenian are significant: we may notice abundance of case combinations, use of such forms for plural formation, which more spread out and became regularity in the Middle Armenian. In the verbal system we see not regular manifestations, which show stabilization intents.

In the syntactic level noticeable are the changes in case of syntax and agreement of attribute-attributable word, uncoordinated attribute - uncoordinated attributable word, and in case of use of prepositions.

In the fourth chapter ("The stylistic peculiarities of the work") the linguistic and stylistic peculiarities have been studied (both the means of depicting the author's speech, and parenthetical papers).

The Conclusion reflects the deductions based on the research.

The study of the language in this work by St.Orbelyan grants an opportunity to have an idea about the peculiarities of the transition phase from Old Armenian to Middle Armenian.